600.0448.23.12.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2015 թվականի №448Ա
քաղ. Երևան

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի №173Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 17-ի №172Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանների 28-րդ կետը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության, «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության, «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության, «Քոնթուրգլոբալ Տերրա Հոլդինգս Էս-Ա-Էր-Էլ» բաժնետիրական ընկերության և «Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2015 թվականի հունիսի 8-ին ստորագրված գույքի առուվաճառքի պայմանագրի Ա հավելվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում սահմանել՝
   1) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 6.652 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 7.982 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

2) հզորության ամսական վճարը՝ 1650,19 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1980,23 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 17-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագները սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 1-ի №232Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №173Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
23 դեկտեմբերի 2015թ.